

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԻՆ ՄՇԱԿՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԻ ԿԸ ԿԱՐՕՏԻ

Կառավարության աշխատանքային ծրագիրը մշակելու լիազորված յանձնախումբը գումարեց իր հիմնարկը նիստը: Վարչապետ Ֆուադ Սինիրայի գլխավորությամբ շուրջ հինգ ժամ տեւած երկարատեւ նիստէն ետք, տեղեկատուութեան նախարար՝ Թարեզ Միթրի յայտարարեց, թէ յառաջիակաց արձանագրուած է քաղաքական բանաձեւումի բաժնիկն մէջ:

Միթրի դիտել տուաւ, որ յանձնախումբին մէջ շարք մը հարցերու շուրջ համաձայնութիւն գոյացած է, սակայն որոշ հարցերու պարագային տակաւին կան տարակարծութիւններ, որոնք լուծուիլը յաւելալ ժամանակի կը կարօտի:

Միւս կողմէ, վարչապետ Ֆուադ Սինիրայ վարչապետարանին մէջ ընդունեց Հարաւային Լիբանանի մէջ տեղակայուած ՖԻՆԻԼԻ միջազգային խաղաղապահ ուժերու հրամանատար, գորավար՝ Գլաուտիո Կրացիանսո, որուն հետ քննարկեց Լիբանանի ապահովական կացութիւնը եւ երկրին մէջ տիրող ընդհանուր իրավիճակը:

Վարչապետարան այցելեցին նաեւ Լիբանանի մօտ Եգիպտոսի դեսպան՝ Աիմէտ Պըտիաուիլն եւ փոխ վարչապետ՝ Իսամ Ալու ժամրակ:

Վարչապետ Սինիրայ, միաժամանակ մօտէն հետեւեցաւ անտառներու մէջ բռնկած հրդեհներուն: Ան մնայուն կերպով հեռաձայնային խորհրդակցութիւններ ունեցաւ ներքին գործոց նախարար՝ Չիատ Պարուտի հետ, ինչպէս նաեւ հըրդեհները հակակշիռի տակ առելէ փորձող բոլոր կառոյցներուն հետ:

Երեկոյեան՝ վարչապետը մեկնեցաւ Գլեմանսո, ուր հանդիպում մը ունեցաւ Ընկերվարական Յառաջդիմական կուսակցութեան նախագահ Երեսփոխան Ուալիտ ճոմպարաին հետ:

### ԱՅԺՄ ԳՐԴԵՂՆԵՐԸ ԿԸ ՓՈՐՁԵՆ ԱՅՐԵԼ ԼԻԲԱՆԱՆԸ...

Լիբանանեան բանակը, քաղաքային պաշտպանութեան միաւորներ եւ հրշէջներ շարունակեցին իրենց աշխատանքը երկրին տարբեր շրջանները հարուածող հրդեհները մարելու նպատակաւ:

Հրդեհներ արձանագրուեցան Սուբ Էլ Ղարայի, Ալէյի, Շուֆի եւ Զուսայայի շրջաններուն մէջ:

Ներքին գործոց նախարար՝ Չիատ Պարուտ այցելեց Ալէյ: Ան խոստացաւ ամէն ջանք ի գործ դնել հակակշիռի տակ դնելու համար բռնկած հրդեհները:

### ԳԵՐԻՆԵՐՈՒՆ ՀԱՐՑԸ ՊԻՏԻ ՓՈՒՍԼՅՈՒԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Արդարադատութեան նախարար՝ Իպրահիմ Նաժժար Երեքշաբթի օր ընդունեց սուրիական բանտերուն մէջ գտնուող լիբանանցի արգելափակեալներու եւ անյայտ կորսուած լիբանանցիներու թղթածրարի քննարկումի պատասխանատու յանձնախումբը:

Նշենք, թէ կառավարութեան անդամներ եւ քաղաքական բազմաթիւ հոսանքներ նախագահ գորավար Միշէլ Սըլէյմանէ կը խնդրեն անձամբ հետեւիլ այս թղթածրարին եւ Սուրիոյ մէջ լիբանանցի գերիներու հարցը փակել՝ Իսրայիլի հետ գերիներու հարցը վերջնականապէս փակելէ ետք:

### ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐՑ ԼՈՒՐԵՐ

Հանրապետութեան նախագահ, գորավար Միշէլ Սըլէյման, Պաապտայի մէջ ընդունեց Փարակուէի լիբանանեան համայնքի մէկ պատուիրակութիւնը: Ան ըսաւ, որ Լիբանան ազգային համերաշխութեան եւ գոյակցութեան երկիր մըն է: Ան շնչեց, որ ահաբեկութիւնը հեռու է արաբներէն, իսլամներէն եւ Լիբանանէն եւ անհրաժեշտ է պայքարիլ անոր դէմ:

Նախագահը յաջողաբար ընդունեց արտաքին գործոց նախարար՝ Ֆաուզի Սալլուխը, պետական նախարար՝ Ուալիտ Ալու Ֆաուրը, երեսփոխաններ Ֆուադ Սաատը եւ Պահի Ուանսուսը, ինչպէս նաեւ նախկին երեսփոխան՝ Ղաթթաս Խուրիին:

Նախագահական պալատի մամլոյ գրասենեակը պաշտօնապէս հերքեց շաբաթավերջին՝ նախագահ Միշէլ Սըլէյմանի Դամասկոս այցելութեան մասին մամուլի մէջ շրջող լուրերը:

Մարտ 14-ի ուժերու անդամ, երեսփոխան Աիմէտ Ֆաթալթ ըսաւ, թէ Սուրիոյ հետ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելը Մարտ 14-ի ուժերուն համար միշտ ալ եղած է առաջնությունը մը:

Ֆաթալթ ողջունեց Սուրիոյ հետ բարի դրացիական յարաբերութիւններու հաստատումը պայմանաւ, որ ան որբէւ հակազդեցութիւն չունենայ միջազգային դատական ատենակի վրայ:

Անարտելով Աստրախա կատարած իր հովուապետական այցելութիւնը, մարոնիներու Նասրալլա Սֆէյր պատրիարքը վերադարձաւ Լիբանան: «Կառավարութեան աշխատանքային ծրագիրին ծնունդը այժմեական է, եւ կ'ուզենք բարեկամական յարաբերութիւններ մշակել բոլոր երկիրներուն հետ», յայտարարեց ան, նախագահ վարչապետ Ռաֆիք Յարիրիի անուան Պէյրութի միջազգային օդակայանին մէջ, իր ժամանման պահուն: «Սակայն անոր ուշացումը լաւ նախանշան մը չէ», շեշտեց Սֆէյրը:

Սեուտական Արաբիոյ «Ալ-Ուաթան» օրաթերթին մէջ լոյս ընծայուած հարցազրոյցի մը մէջ, Ընկերվարական Յառաջդիմական կուսակցութեան նախագահ՝ Ուալիտ ճոմպարաին, մեծապէս կը գնահատէ կրօններու միջեւ երկխօսութեան՝ Ապտալա Պըն Ապտէլ Ազիզի յանդուգն նախաձեռնութիւնը, աւելցնելով, որ Մատրիտի մէջ կայացուցեալ երկխօսութեան խորհրդաժողովը եկաւ վերջնականապէս ձախողութեան մատնելու նախապէս գոյութիւն ունեցող արգելքները:

Սեուտական Արաբիոյ՝ «Օքազ» օրաթերթի առջի օրուան թիւով լոյս ընծայուած հարցազրոյցի մը մէջ, զբօսաշրջութեան նախարար՝ Էլի Մարուտի՝ Լիբանան-Սուրիա փոխ յարաբերութիւնները ճիշդ հունի վրայ դնելու համար, անհրաժեշտ կը նկատէ լիբանանցի բանտարկեալները ազատ արձակել, դեսպանատուներ փոխանակել եւ վարչապետ Ֆուադ Սինիրային պաշտօնապէս Դամասկոս հրաւիրել:

Գերմանական «Տեր Շփիլկըլ» օրաթերթը, իր տեղեկութիւնը քաշելով գարուկի սպասարկութենէ մը, իր վերջին թիւին մէջ գրած էր, թէ Հրգապալա կը նախապատրաստուի Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկայի մէջ հարուածելու հրեական թիրախներ:

Իսկ իսրայելեան մամուլը կը գրէ, թէ գերիներու փոխանակութենէն ետք, Մոսատը կը պատրաստուի Հրգապալայի ղեկավարներ ահաբեկելու:

Հակառակ լիբանանեան բանակին, քաղաքային պաշտպանութեան միաւորներուն եւ հրշէջներուն բանեցուցած բազմակողմանի ճիգերուն, Սուբ Էլ Ղարայի եւ Ալէյի հրդեհները կը շարունակեն իրոյ ճարակ դարձնել շրջանին կանաչապատ կենսոլորտը: Հրդեհը հակակշիռի տակ առնելու նպատակաւ երկէ առաւօտեան լիբանանեան կառավարութիւնը փոխառութեան կարգով Կիպրոսէն ստացաւ "Papa 24" տիպի երկու արդիական ուղղաթիւներ:

Հանրապետութեան նախագահ, գորավար՝ Միշէլ Սըլէյմանին մօտիկ աղբիւրներ հաւաստեցին, թէ ան բաւական գոհ է Լիբանան-Սուրիա յարաբերութիւններուն այժմու ընթացքէն: Աղբիւրը աւելցուց, թէ նախագահ Պաշար Ասատ կ'աշխատի գործադրել Ֆրանսայի նախագահ՝ Նիքոլա Սարքոզիին տուած իր խոստումները եւ միաժամանակ կը փորձէ՝ փոփոխութեան ենթարկել Սուրիոյ հանդէպ շրջանային եւ միջազգային ընտանիքին վերապահութիւնները:

Լիբանանեան Ուժերու Գործադիր Խորհուրդի նախագահ՝ Մեմիթ ժաաժ, երկէ առաւօտեան Փարիզի մէջ յայտարարեց, թէ Շեպաա Ազարակներուն լուծումին շուրջ Սուրիոյ արտաքին գործոց նախարարին արտայայտութիւնները յուսահատական էին: Ժաաժ յայտնեց, թէ աւելի լուրջ մօտեցում մը կ'ակնկալէր Սուրիայէն: Ան նաեւ յայտնեց, որ իր կարծիքով, Սուրիա փոփոխութեան չէ ենթարկած Լիբանանի հանդէպ իր քաղաքականութիւնը:

Կառավարութեան աշխատանքի ծրագիրը մշակող յանձնախումբը վարչապետ Ֆուադ Սինիրայի նախագահութեան նիստը: Փոխ վարչապետ՝ Իսամ Ալու ժամրա՝ Արաբական Եմիրութիւններու՝ «Ալ Իթթիհատ» օրաթերթին տուած հարցազրոյցի մէջ յայտնած է, թէ կառավարութեան աշխատանքային ծրագիրը գրեթէ ամբողջացած է: Միւս կողմէ, տեղեկատուութեան նախարար՝ Թարեզ Միթրի ըսաւ, թէ աշխատանքային ծրագիրին քաղաքական բաժնիկն շուրջ համաձայնութեան մը գոյացումը յաւելալ ժամանակի կը կարօտի:

Երեսփոխան Ղասսան Մուխայպը յայտարարեց, որ առանց գերիներու հարցին եւ անյայտ կորածներու թղթածրարին լուծում մը գտնելու անհնար է բարեկարգել Լիբանան-Սուրիա յարաբերութիւնները: Լիբանանի մէջ լոյս տեսնող Մուսթաքապա օրաթերթը վերջին թիւին մէջ հրապարակած է սուրիական բանտերուն մէջ արգելափակուած լիբանանցիներուն անուանացանկը: Ուշագրաւ է, որ անոնց թիւը կը հաշուէ 177-ը եւ ոչ՝ 91, ինչպէս կարգ մը օրաթերթեր կ'աւելան ժամանակի կը կարօտի:

«Նահար» օրաթերթը իր երեկուան թիւով գրած է, թէ ամերիկեան արքիւր մը՝ «Նահար»-ին միջոցաւ, Շեպաա Ազարակներուն շուրջ՝ Իսրայիլի հետ անուղղակի բանակցութիւններ վարելու առաջարկ մը ներկայացուցած է լիբանանեան կառավարութեան:

### Ս.Դ.Հ.Կ. ԸՆՏՐՈՎԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Յարգելի Հայրենակից՝

Ս.Դ.Հ.Կ. Ընտրական Կեդրոնական Մարմինը կու գայ ձեզի տեղեկացնելու, թէ յետայսու իր գրասենեակը բաց է շաբթուան բոլոր օրերը, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն, կէսօրէ ետք ժամը 3:00-էն 8:00, ընդունելու ձեզ եւ ստուգելու ձեր ընտրական կարգավիճակը:

Կը խնդրուի մեր շարքայիններէն եւ համակիրներէն, ներկայանալ ստուգելու համար իրենց ընտրական կարգավիճակը:

Ս.Դ.Հ.Կ. ԸՆՏՐՈՎԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

### ԻՐԱՆ ՄԻՋՆՈՐԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԻՈՒՅ ՄԻՋԵՒ

Իրանի արտաքին գործոց նախարար՝ Մանուշահար Մոթթաքի հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ Հայաստանի իր պաշտօնակիցին՝ Էտուարտ Նալպանտեանին հետ:

Իրանցի նախարարը նշեց, թէ շատ ուրախալի է Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ վերջին շրջանին ստեղծուած դրական մթնոլորտը: Ան յոյս յայտնեց, որ անիկա կը նպաստէ հարեան պետութիւններու միջեւ բարեկամութեան հաստատման: Մոթթաքի նաեւ յայտնեց, թէ Իրան կրնայ միջնորդի դեր ստանձնել Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ:

### ՊԷՕՐՆԻ ԱՃԻՆՆԵՐԸ ԱՄՓՈՓՈՒԵՑԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Հայկական Յեղասպանութեան բանգարանի նախաձեռնութեամբ Յուլիս 22-ին տեղի ունեցաւ նորվեկիացի նշանատր միախոնար եւ հայասէր՝ Պոտիլ Պէօրնի գերեզմանէն բերուած հողի՝ Հայկական Յեղասպանութեան յուշահամալիրի յուշապատին մէջ ամփոփելու եւ յուշատախտակի տեղադրման արարողութիւնը: Միջոցառման մասնակցելու համար Նորվեկիայէն Հայաստան ժամանած էին Պոտիլ Պէօրնի ընտանիքին անդամները:

Նշենք, որ համաշխարհային՝ «ԿԻՆ միախոնար աշխատողներ»-ու կազմակերպութեան կողմէ Պոտիլ Պէօրնի 1905-ին գործուղուած է Օսմանեան կայսրութիւն. նախ՝ Մեզրէ, այնուհետեւ, Մուշ, ուր ան աշխատած է այրիներու եւ որբերու հետ: Եղած է Հայկական Յեղասպանութեան ակնատես եւ լուսակարած է անոր անաւոր հետեւանքները: 1917-ին վերադարձած է Նորվեկիա, սակայն շուտով վերադարձած է նորաստեղծ Հայաստանի Հանրապետութիւն, ուր հիմնադրած է որբանոց մը: Յետագային տեղափոխուած է Սուրիա: Այստեղ եւս որբանոց մը հիմնած է: Միջեւ 1934 զբաղած է որբախնամներու հոգատարութեամբ՝ իր աւանդ ներդնելով Եղեռնէն մնացապարծ՝ հայ որբերուն օգնելու գործին:

### ՏԸ ՊՈՒԶ ԺԱՄԱՆԵՑ ԵՐԵՒԱՆ

Երոպայի Խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ՝ Լուիզ Մարիա Տը Պուշ երկէ ժամանեց Հայաստան:

Այսօր, ան Հայաստանի Ազգային Ժողովին մէջ տեսակցութիւններ պիտի ունենայ Երոպայի Խորհուրդի խորհրդարանական վեհաժողովին մէջ ազգային ժողովի պատուիրակութեան անդամներուն եւ խորհրդարանական տարբեր հոսանքներու, ինչպէս նաեւ՝ ընդդիմութեան ներկայացուցիչներուն հետ:

### ՄԵՐԺ ՄԱՐԳՍԵԱՆԻ ԱՌԱՋԻՆ 100 ՕՐԵՐԸ

Իր իշխանութեան 100-րդ օրուան առիթով կազմակերպած մամուլի ասուլիսին ըմբացքին, Հայաստանի նախագահ՝ Սերժ Սարգսսեան յայտարարեց, որ իշխանութիւնը ինքզինք կը զգայ ինքնավերահաս իշխանութեան մաս կազմող ուժերը, ի վիճակի են լուծելու երկրին առջեւ ցցուող բոլոր դժուարութիւնները: Հայ-ռուսական յարաբերութիւններուն մասին ակնարկելով Սարգսսեան ըսաւ, թէ այդ յարաբերութիւնները ոչ միայն լաւ անցեալ ունին, լաւ՝ ներկայ, այլ նաեւ՝ վայելուն ապագայ:

Ինչ կը վերաբերի Ատրպէյճանի մէջ Ռուսիոյ եւ Ատրպէյճանի նախագահներուն կնքած համաձայնութեան, ուր Ռուսիա կ'ընդունի Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը, Սերժ Սարգսսեան յայտնեց, թէ որբէ երկրի նախագահի կը կրնար մերժել մէկ այլ երկրի հողային ամբողջականութիւնը, ինչպէս նաեւ՝ չի կրնար մերժել ազգերու ինքնորոշման իրաւունքը: Նախագահը աւելցուց, թէ Հայաստանը չունի թիւ 1609 եւ 1620 բանաձեւերը գործադրելու կամ չգործադրելու հարց:

Հայաստանի նախագահը նաեւ պարզաբանեց երկխօսութեան վերաբերել իր պատկերացումը. «Երբ եւ կ'ըսեն երկխօսութիւն, եւ նկատի ունին երկխօսութիւն ժողովուրդին հետ, եւ նկատի ունին պետութեան եւ հասարակութեան միջեւ երկխօսութիւն, եւ ոչ թէ երկխօսութիւն հանրապետութեան նախագահին եւ ռեւ անհատի միջեւ»: Սարգսսեան իր խօսքը ուղղելով ընդդիմութեան պահանջներուն ըսաւ. «Եթէ այդ մարդիկ կը պահանջեն ընդդիմութիւնը կապցնել, եւ արդէն յոգնած են ընտրութիւններէն: Իսկ ինչ կը վերաբերի մէկ զանգով տասնեակ մարդոց ազատ արձակելու մասին, եւ վարժուած չեն այդպէս աշխատիլ, որովհետեւ մէկ զանգով տասնեակ մարդոց ազատ արձակելը կը նշանակէ նաեւ մէկ զանգով տասնեակ մարդոց ազատագրելը», լուսաբանեց նախագահ Սարգսսեան: Ակնարկելով Ժիրայր Մեֆիլեանին քաղաքացիութեան տալու հարցին, Սերժ Սարգսսեան լրագրողներուն պատասխանեց ըսելով, որ Ժիրայր Մեֆիլեանը իրեն դիմած չէր այդ հարցով: Ինք որոշում կը կայացնէ երբ իրեն ներկայացուի Մեֆիլեանի դիմումը:

### ՏԻՆԵՒ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԲԱՅԱՅԱՅՏԷ ՆՈՐ ԾԱԼՔԵՐ

Հրանդ Տինքի սպանութեան հետապնդումին ծիրէն ներս, Տրապիզոնի կուսակալ Նուրի Օրտօյան յայտնեց, թէ թմբիչներու ու դատախազութեան կողմէ պատրաստուած տեղեկագրին լոյսին տակ, հարցաքննութեան պիտի ենթարկուին Տրապիզոնի նախկին ոստիկանապետ՝ Ալի Էօզն ու այլ զինուորական պատասխանատուներ: Դատախազութեան ըմբացքին, երկու յիմանապետներ պնդած էին, որ նախապէս տեղեկութիւններ ունեին Տինքի դէմ կազմակերպուող դատաքննութեան մասին եւ զանոնք՝ օրին հաղորդած էին իրենց հրաւանատարին, սակայն վերջինս ոչինչ ըրած էր կանխելու՝ Հրանդ Տինքի սպանութիւնը: